# ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## N <<ՀՀ-ԱՄ-ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ-ԲԸԱՀԾՁԲ-16/01>>

ք. Աշտարակ <<01>> Փետրվարիի 2016 թ.

<<ՀՀ Արագածոտնի մարզպետարանը>>, ի դեմս աշխատակազմի ղեկավար Հ.Գևորգյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Ավգոռ>> ՍՊԸ-ն ի դեմս Ընկերության տնօրեն Թ.Շահվերդյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Ներկայացուցչական ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր և N 2 հավելված գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 և N2 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործառնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է **_14__** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 N4 և N 4.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ Արագածոտնի մարզպետարան

ՀՀ Արագածոտն մարզ ք.Աշտարակ
Վ.Պետրոսյան 4
ՀՎՀՀ 05004247
ՀՀՖինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900441041176
Աշխատակազմի ղեկավար
Հ.Գևորգյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

ԱՎԳ[illegible]Ռ ՍՊԸ
Ք.Աշտարակ Ն.Աշտարակեցու 17/1
Հեռ 0[illegible]4826926
ՀՎՀՀ 05016072
Յունիբանկ ՓԲԸ
Հ/Հ 2412[illegible]100262900
Էլ հասցե E:mail tazayank@mail.ru
Տնօրեն՝ [illegible].Շահվերդյան

/ստորագրություն/
Կ.Տ

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ*

*Հավելված 1*
*<<01>>Փետրվարի 2016 թ. կնքված*
*NՀՀ-ԱՄ-ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ-ԲԸԱՀԾՁԲ-16/01 ծածկագրով գնման պայմանագրի*

# ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ձեռքբերվող Ծառայության նկարագիր

| անվանումը | տեխնիկական բնութագիրը | չ/մ | քանակը | մատակարարման վայրը | մատակարարման ժամկետը |
|---|---|---|---|---|---|
| Ջուր, պոլիէթիլային տարայով 0,5լ | Խմելու աղբյուրի ջուր, լրացուցիչ մաքրման փուլ անցած, շշալցված տարողությամբ պոլիմերային շշերում: Անվտանգությունը՝ ըստ 2-III-4.9-01-2010 հիգենիկ նորմատիվների, իսկ մակնշումը << Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | հատ | 900 | ՀՀ Արագածոտնի մարզպետարան | 2016թ պատվիրատուի առաջարկությամբ |
| Հանքային ջուր, պոլիէթիլային տարայով 0,5լ | 30/62 (հանքայնացումը 3,9-4,8 գ/դմ³), կամ 1/00 (հանքայնացումը 4,2-5,2 գ/դմ³) կամ 1/2001 (հանքայնացումը 3,2-4,7 գ/դմ³) հորատանցքից, փաթեթավորումը՝ շշալցված տարողությամբ պոլիմերային նյութերից պատրաստված շշերում, ՀՏՍ 191-2000: Անվտանգության մակնշումը ըստ ՀՀ կառավարության 2009թ Ապրիլի 30-ի N 491-Ն որոշմամբ հաստատված <<Շշալցված հանքային ջրերին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի>> <<Սննդամթերքի անվտանգության մասին>>ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | հատ | 900 | ՀՀ Արագածոտնի մարզպետարան | 2016թ պատվիրատուի առաջարկությամբ |
| Հյութ բնական 1Լ | Պատրաստի օգտագործման բնական հյութ Մրգահյութեր՝ պատրաստված թարմ մրգերից և պտուղներից, պտղամսով, շաքարի օշարակի հավելումով կամ առանց դրա, արտաքին տեսքով պարզ՝ նստվածքի զանգվածային մասը 0,2% ոչ ավելի և ոչ պարզ՝ 0,8% ոչ պակաս, արտադրված ՀՀ տեխնիկական պայմանների: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2009 թ. հունիսի 26-ի թիվ 744-Ն որոշմամբ հաստատված "Հյութերին և հյութամթերքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի", "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | հատ | 50 | ՀՀ Արագածոտնի մարզպետարան | 2016թ պատվիրատուի առաջարկությամբ |

Ծառայության մատուցման ժամկետը

| Սկիզբը | Ավարտը |
|---|---|
| Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը | 20.12.2016թ |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ Արագածոտնի մարզպետարան
ՀՀ Արագածոտն մարզ ք.Աշտարակ
Վ.Պետրոսյան 4
ՀՎՀՀ 05004247
ՀՀՖինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900441041176
Աշխատակազմի ղեկավար
Ա. Գևորգյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
ԱՎԳՈՌ ՍՊԸ
Ք.Աշտարակ Ն.Աշտարակեցու 17/1
Հեռ 094826926
ՀՎՀՀ 05016072
Յունիբանկ ՓԲԸ
Հ/Հ 24122100262900
Էլ հասցե E:mail tazayank@mail.ru
Տնօրեն Ռ.Շահնվողյան
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված 2*
*<<01>>Փետրվարի 2016 թ. կնքված*
*ՆՀՀ-ԱՄ-ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ-ԲԸԱՀԾՁԲ-16/01 ծածկագրով գնման պայմանագրի*

## ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հ/Հ | Ապրանքի | | | Նախատեսվում է գնել 2016թ. | | | | | | | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Անվանումը | Չափման միավորը | Միավորի գինը | I եռամսյակ | | II եռամսյակ | | III եռամսյակ | | IV եռամսյակ | | | |
| | | | | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 1 | Ջուր, պոլիէթիլային տարայով 0,5լ | հատ | 130 | 225 | 29250 | 225 | 29250 | 225 | 29250 | 225 | 29250 | 900 | **117000** |
| 2 | Հանքային ջուր, պոլիէթիլային տարայով 0,5լ | հատ | 170 | 225 | 38250 | 225 | 38250 | 225 | 38250 | 225 | 38250 | 900 | **153000** |
| 3 | Հյութ բնական 1լ | հատ | 600 | 10 | 6000 | 20 | 12000 | 10 | 6000 | 10 | 6000 | 50 | **30000** |
| Ընդամենը | | | | X | | X | | X | | X | | X | **300000** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ Արագածոտնի մարզպետարան

ՀՀ Արագածոտն մարզ ք.Աշտարակ
Վ.Պետրոսյան 4
ՀՎՀՀ 05004247
ՀՀՖինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900441041176
Աշխատակազմի ղեկավար
Հ.Զկորզյան

/ստորագրություն/

**ԿԱՏԱՐՈՂ**

ԱՎԳՈՐ ՍՊԸ
Ք.Աշտարակ Ն.Աշտարակեցու 17/1
Հեռ 094826926
ՀՎՀՀ 05016072
Յունիբանկ ՓԲԸ
Հ/Հ 24122[illegible]00262900
Էլ հասցե E-mail tazayank@mail.ru
Տնօրեն [illegible]

/ստորագրություն/

*Հավելված 3*
*<<01>> Փետրվարի 2016 թ. կնքված*
*N ՀՀ-ԱՄ-ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ-ԲԸԱՀԾՁԲ-16/01 ծածկագրով գնման պայմանագրի*

## ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

### ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| N | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 206 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1. | Ներկայացուցչական ծառայություններ | | 20000 | 30000 | 60000 | 80000 | 105000 | 135000 | 165000 | 180000 | 230000 | 280000 | 300000 | **300000** |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ Արագածոտնի մարզպետարան
ՀՀ Արագածոտն մարզ ք.Աշտարակ
Վ.Պետրոսյան 4
ՀՎՀՀ 05004247
ՀՀՖինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900441041176
Աշխատակազմի ղեկավար
Հ.Գևորգյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

ԱՎԳՈՒՌ ՍՊԸ
Ք.Աշտարակ Ն.Աշտարակեցու 17/1
Հեռ 094826926
ՀՎՀՀ 05016072
Յունիբանկ ՓԲԸ
Հ/Հ 24122100262900
Էլ հասցե E-mail tazayank@mail.ru
Տնօրեն Ս.Ծաղկեվորյան

/ստորագրություն/
Կ.Տ

Պայմանագրի կողմ

______________________________
______________________________
գտնվելու վայրը _______________
հհ ___________________________
______________________________
հվհհ _________________________

Պատվիրատու

______________________________
______________________________
գտնվելու վայրը _______________
հհ ___________________________
______________________________
հվհհ _________________________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________________________
______________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն՝ ի դեմս ________________________________________ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս____________________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «________________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

*Հավելված 4.1*
*<<01>> Փետրվարի 2016 թ. կնքված*
*N ՀՀ-ԱՄ-ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ-ԲԸԱՀԾՁԲ-16/01 ծածկագրով գնման պայմանագրի*

# ԱԿՏ N

**պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ**

Սույնով արձանագրվում է, որ ------------------------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
-------------------------------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ---------------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| **Անվանումը** | **Քանակական ցուցանիշը (փաստացի)** | **Չափի միավորը** |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն